

ՍՎՏԿՆՈՒ ՄԷՐԻՆ

Սվտկնու մէրին, Սվտկնու մէրին...
Եւ դուք չէք տեսել Սվտկնու մէրին:
Նազելի կուսի հրապուրանքներով
Մարդ է կախարդում Սվտկնու մէրին:
Սվտկնու մէրին, Սվտկնու մէրին...
Այնքան գեղեցիկ, այնքան սիրուն է
Սվտկնու մէրին:
Երկու լեռների գոգումն է ընկած
Սվտկնու մէրին:

Երկու լեռներ են իրարու դիմաց,
Երկուսն էլ չքնաղ, երկուսն էլ չքեղ,
Երկուսն էլ պէս-պէս զարդերով պնծուած,
Կարծես Եդեմն է տարածուել այնտեղ:
Երկու լեռներ են, երկուսն էլ սիրուն:
Եւ ամեն տարի երկինք ու երկիր
Սիրով միացած:
Տալիս են այնտեղ մի շուշլ գարուն:
Եւ այդ լեռների դիւթական ծոցում
Ընկած է շուքով Սվտկնու մէրին,
Ուր եղեմական ջրեր են հոսում,
Պաղ ալիքները անոյշ խոխովով
Կամաց քսելով կանաչ ավերին:

Երկու լեռներ են:
Եւ հէնց այդ երկու լեռների կողքին՝
Անթիւ կնճիռներ ժողված ճակատին՝

Տնկուել է թափով Սվտկնայ-դեալին։
Մարդ սարսափում է, երբ որ նայում է
Այդ մերկ, ապառաժ, քարքարոտ սարին։
Ժայռեր, ի՜նչ ժայռեր...

Կարծես հսկան է վատահ իր բազկին՝
Փորձելու համար իր ոյժն ահագին՝
Այդ ահեղ ժայռերն հաւաքել, բերել,
Կախել իր սիրած լեռների կրճքին
Եւ կամ կատաղած՝ զարկել իր լախտով,
Փորել, փորփրել այդ սարի կրճքում
Վիհեր սոսկալի և դրել այնտեղ
Մշտական խաւար,

Մշտական խաւար անթափանցելի։
Երկու լեռները, Սվտկնու մէրին,
Որքան էլ չքնաղ, որքան սիրուն են,
Նոյնքան էլ ուժեղ սիրով սիրում են
Իրանց հարեւան ապառաժ սարին։
Այդպէս է, այդպէս. գեղեցիկ հարսը
Վայրենի երկրում

Սիրում, պաշտում է վայրենի ոյժին.
Եւ ինչո՞ւ նրանք էլ իրանց կանաչով,
Առու-աղբիւրով,

Ամեն առաւօտ քաղցր ժպիտներ
Ջտան հարեւան յաղթագէտ սարին։
Եւ... ախր նրանք էլ գաղտնիքներ ունին.
Ամենից ծածուկ, ամենից գաղտնի,
Միայն այդ չորսին, այդ չորսին յայտնի։

—
Ծառազարդ գետի փոքրիկ հովտի մէջ
Նազունաղանքով ընկած է մի գիւղ.
Սվտկնին է դա, փոքրիկ Սվտկնին,
Գեղեցիկ, օրհնուած, հարուստ Սվտկնին,
Սվտկնու մէրին, Սվտկնու մէրին,
Եւ դուք չէք տեսել Սվտկնու մէրին։

ՄԻՍՍԱԿ ՏԵՐ-ԴԱՆԻԷԼԵԱՆ